

**ԿԵՆՏՐՈՆԱԶԻԳ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՆԱՎՈՐՈՒՄԸ
ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ
ԱՆԳԼԻԱՅՈՒՄ XI Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ**

ԵՍԱՅԱՆ Է. Ս.

Անգլիայի ավատատիրական թագավորությունը նվաճելուց և քաղաքական իշխանությունը զավթելուց անմիջապես հետո Վիլիելմ I-ը (Վիլիելմ Նորմանդացի, 1066-1087 թթ.) ձեռնամուխ է լինում վերացնելու ապակենտրոնացումը, հիմնադրելու թագավորական կենտրոնացված իշխանություն, սահմանելու կենտրոնական և տեղական հաստատությունների փոխհարաբերությունները, վերակառուցելու թագավորության կառավարման համակարգը, փոփոխելու նրա քաղաքական ուժերը, ավատատիրական սեփականության կառավարման բնագավառում հիմնելու իր գերիշխանության իրավունքը և սահմանելու թագավորական իշխանության իրավասությունները: Սակայն Վիլիելմ I-ի ձեռնարկած պետաիրավական միջոցառումների դեմ թշնամաբար էր տրամադրված անգլոսաքսոնական՝ տեղական բնակչությունը: Չնայած վերջինիս խորին դժգոհությանը և խռովություններին՝ Վիլիելմ I-ի շուրջն են համախմբվում և միավորվում նորմանդական բարոնները, որոնք անխնա ճնշում էին տեղական բնակչության համառ դիմադրությունը: Բացի այդ, իբրև գերագույն ավատատեր, թագավորը կենտրոնացված թագավորական իշխանության քաղաքականություն կենսագործելու խնդրում իր քաղաքական և իրավական պատվարն ու նեցուկն էր համարում թագավորության բոլոր ավատատերերին ու խոշոր հողատերերին, ինչպես նաև նրանց ավատառուներին (վասալներին), որոնք ունեին դատական և գանձատան տնօրինության իրավունք: Իսկ նորմանդական նվաճումից սկսած՝ մինչև XII դ. կեսերն ընկած ժամանակաշրջանը, Անգլիայի թագավորական իշխանությունը կրում էր «սենյորիալ» ավատատիրական բնույթ: Եվ հատկապես հենց այդպիսի պատմաքաղաքական իրադրության պայմաններում էր, որ Անգլիայի ավատատիրական թագավորությունում սկզբնավորվում է Վիլիելմ I-ի թագավորական իշխանության *կենտրոնաձիգ քաղաքականությունը*, քանի որ «նախքան նորմանդական կառավարումը, այն ապակենտրոնացված էր»¹:

Անգլոսաքսոնական Անգլիայի ավատատիրական թագավորությունների՝ հատկապես գյուղական համայնքներում VI-IX դդ. հետզհետե ստեղծվում և հիմնադրվում էին ավատատիրության հասարակական-տրնտեսական, քաղաքական-իրավական հաստատությունները և դրանց համակարգը, որոնք արդեն ընդունում ու կրում էին ավատատիրության ձև, բովանդակություն և բնույթ: Իսկ IX-XI դդ. անգլոսաքսոնական Անգլիայի բոլոր թագավորություններում նկատելի էր առա-

¹ Տե՛ս **Frederick G., Kempin Jr.**, *Historical Introduction to Anglo-American Law, Pennsylvania, 1990, p. 8.*

ջաղիմությունը թագավորական իշխանության կառավարման ապարատի ռիթմիկ և պետաիրավական համաչափ գործունեությունը: Մակայն 1066 թ., նորմանդական նվաճման հետևանքով ամբողջ թագավորական իշխանությունը վերևից ներքև կենտրոնացվում և անցնում է Վիլիելմ Նորմանդացուն: Նրա կառավարման օրոք Անգլիայի ավատատիրության համակարգի քաղաքական առանձնահատկությունը եղել է թագավորի կողմից պատվիրված կամ պատվիրագրված պետական իշխանությունը՝ սկսած անգլոսաքսոնական գյուղական համակարգից՝ ընդհուպ թագավորական խորհուրդը²:

Իբրև անգլոսաքսոնական Անգլիայի թագավորական իշխանության գլուխ՝ գերիշխան, Վիլիելմ I-ը բոլոր ավատների անբաժան ու միակ գերագույն ավատատերն էր: Նա ավատները շնորհում էր իր անմիջական ավատառուներին՝ զինվորական և այլ ծառայություններ կրելու, ինչպես նաև սովորույթներով նախասահմանված մի քանի տեսակ պարիակներ վճարելու համար: Ըստ որում, թագավորն իր անմիջական ավատառուներին, ավատների շնորհման հետ միաժամանակ, վերապահում էր այսպես կոչված քաղաքական իրավունքներ: Իսկ դա, ըստ էության, նշանակում էր ավատառուներին իրավունք վերապահել կառավարելու մշակներին, նրանց նկատմամբ դատարանի դեր կատարել, իրականացնել դատաստան, հարկեր գանձել և պարիակների կատարում պահանջել: Այս իրավունքներին համապատասխան էլ ավատառուները պարտավոր էին կատարել զինվորական պարիակ և համալրել թագավորական զորքը: Պատմաքաղաքական այդ դարաշրջանում ամբողջ Անգլիան բաժանված էր վարչատարածքների, որոնք հայտնի էին «ասպետական ավատ» անվանումով և համապատասխանում էին տեների նախկին տիրույթներին: Ասպետական ավատի յուրաքանչյուր վարչատարածք պարտավոր էր ունենալ սպառազինված մեկ հեծելազոր: Հատկապես դրա շնորհիվ Անգլիայի ավատատիրական թագավորությունը երկար ու ձիգ տարիներ չի հպատակվել Վիլիելմ Նորմանդացուն: Նման պայմաններում էր, որ Անգլիայի քաղաքական-իրավական հաստատությունները արմատավորվում էին ոչ թե ներքևից, այլ վերևից՝ վերնաշենքից, առավել ևս վերնախավից: Իսկ այդպիսի թագավորական կարգն ավելի ավարտուն ու վերջնական արտահայտություն էր գտնում Անգլիայում, քան Արևմտյան Եվրոպայի մյուս թագավորություններում, մասնավորապես՝ Ֆրանսիայում, Գերմանիայում և այլն:

Վիլիելմ I-ի թագավորության օրոք ստեղծվում են մի շարք նախադրյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում հիմնադրելու թագավորական ուժեղ և հզոր քաղաքական կազմակերպություն, ավատատիրական կենտրոնացված պետություն: Այդ տեսակետից Անգլիայի թագավորական իշխանության քաղաքական ռազմագիտությունը և ռազմավարությունը (*the strategics and strategy*) խարսխվում էին Հաստինգսի ճակատամարտում (1066 թ.) տարած հաղթանակի, Անգլիայի թագավորական իշխանության նվաճման, կենտրոնական և տեղական վարչական հաստատությունները վերևից ներքև կառավարելու՝ Վիլիելմ I-ի ռազմական կենսավորածի կարողության վրա: Բացառություն էին կազմում Չեստերի և Շրուսբերի

² Տե՛ս **Hume D.**, *The History of England. A new edition, Philadelphia, 1776, p. 185.*

էությունները (կոմսությունները), որոնք, իբրև սահմանային ու սահմանապահ վարչատարածքներ, նախատեսված էին հանդես գալու Ուելսին և Շոտլանդիային դեմ հանդիման: Ավատատիրական Անգլիայում բացառվում էր կենտրոնական և տեղական իշխանությունների ինքնուրույնության կամ անկախության հնարավորությունը, որը տվյալ դարաշրջանում առկա էր Ֆրանսիայում, որտեղ գործում էր ավատատիրության քաղաքական ապակենտրոնացման, մասնատվածության՝ «Իմ վասալի վասալը իմ վասալը չէ» (*Homo homines mei, homo homines non est*) ավատատիրական կարգախոսը: Վիլհելմ I-ի ավատատիրական քաղաքականությունը հստակ նպատակաուղղված էր ոչ միայն սանձահարելու անիշխանության կողմնակիցների ընդվզումները, այլև Անգլիայում հիմնադրելու ուժեղ կենտրոնացված թագավորական իշխանություն, հաստատելու գործուն թագավորական կառույցներ: Սակայն այդ թագավորական իշխանությունն ընթանում էր անգլոսաքսոնական պետաիրավական հաստատությունների և նրանց վերապրուկների գործելակերպի գոյության պայմաններում: Թերևս 1066 թ.՝ նորմանդական նվաճման սկզբից նեթ, Անգլիայում թագավորական իշխանությունն արդեն իսկ կրում էր կենտրոնացված բնույթ, քանի որ ավատատիրական ազնվականության քաղաքական ներգործությունը թույլ էր, իսկ նորմանների բացարձակ ինքնիշխանությունը՝ անպարտելի (*of the Normans absolutely incurable*)³: Անգլիայի նորմանդական նվաճումը, ըստ էության, հետադիմական բրնույթ ուներ, քանզի Անգլիայում գերիշխանությունը բացառապես պատկանում էր Վիլհելմ I-ին և նրա ազդեցիկ խոշոր ավատատերերին: Սակայն այն Անգլիայի թագավորական իշխանության կենտրոնացման, բնապատմական զարգացման, հետագա առաջադիմության, ինչպես նաև ավատատիրական պետության ապագա ձևի, պետական կառավարման, կառուցվածքի և քաղաքական ռեժիմի արմատավորման և առաջընթացի համար ելակետային հիմք էր: Եվ հատկապես հենց այդ պետաիրավական հանգամանքների ուժով էլ Վիլհելմ I-ի կառավարությունը տվյալ դարաշրջանում Արևմտյան Եվրոպայի ազդեցիկ ու հեղինակավոր միապետական-թագավորական իշխանություններից մեկն էր: Անգլիայի ավատատիրական պետության և իրավունքի բնապատմական զարգացման ու առաջադիմության հիմնական առանձնահատկությունն այն էր, որ նորմանդական նվաճումից անմիջապես հետո սկզբնավորվում է թագավորական իշխանության կենտրոնացման գործընթացը, իսկ Անգլիայի ավատատիրական իշխանության առաջընթացն ավելի ցայտուն է դրսևորվում XII դ. առաջին կեսից մինչև XIV դ. սկիզբը:

Անգլիայի ավատատիրական թագավորությունում կենտրոնացման քաղաքականությունը կենսագործելու, կառավարման կենտրոնացումն արմատավորելու, կառավարման կարգն ամրապնդելու, ուժեղ և որոշակի քաղաքական ռեժիմ սահմանելու, իր բացարձակ և անառարկելի գերիշխանությունը հաստատելու համար Վիլհելմ I-ը հիմնադրում է պետաիրավական նոր հաստատություններ: Այդ առընչությամբ անգլիագետ պատմաբանները հիշատակում են, որ «ավատատիրական տեսության համաձայն՝ թագավորի խորհուրդը նաև թագավորի դատարանն էր,

³ Նույն տեղում, էջ 188, **Smith G.**, *A History of England, New York, 1966, p. 41.*

թագավորի ժողովը» (*By the applicating of feudal theory to on existing institution the king's council, the king's court, the curia regis*)⁴: Թագավորի խորհրդի անդամության համար անձնական որևէ չափանիշ կամ գույքաչափ իրականում գոյություն չունեին՝ անկախ այն պահանջից, թե նրա անդամները հողատերականատեր-ավատատեր ընեն, թե՞ անգլոսաքսոնական վիտաններ (իմաստուններ): Ի դեմս խոշոր ու ազդեցիկ հողատերերի՝ «Վիլիելմը ստանձնում է անգլոսաքսոնական թագավորի իշխանությունը» (*William kept the powers of an Anglo-Saxon king*)⁵: Թագավորի խորհրդի կազմում էին հարյուր յոթանասուն բարձրագույն բարոններ, ըստ էության, ներկայացնում էին բարոնների կամ պերերի դասը: Իսկ վերջիններս տոհմական ծագում և տիտղոս ունեցող բարոններն էին: Մրանք թագավորի խորհրդի նստաշրջանում պահանջում էին, որ թագավորի խորհուրդը կենսագործի ավատական դատարանի իրավագործությունները: Նրանք դա հիմնավորում էին անգլոսաքսոնական վիտանների՝ դատական պաշտոնական պարտականությունների ոչ արդյունավետ կատարմամբ, գտնելով, որ նրանց դատաիրավական գործառույթները և պետաիրավական գործունեությունը սպառել ու կորցրել էին իրենց վաղեմի նշանակությունը: Թագավորի ավատական դատարանի իրավագործությունների վերապահումը թագավորի խորհրդին կամ ժողովին պերերի դասի ներկայացուցիչները հիմնավորում էին նաև ավատատիրության տեսության այն հիմնադրույթով, որի համաձայն, Անգլիայում թագավորի ավատների օգտագործման համար հնուց ի վեր պահանջվել է ազնվականների համաձայնությունը: Սակայն իրականում իրավականորեն և փաստորեն Վիլիելմ I-ի գերիշխանությունը և հզորությունը թագավորի ավատական դատարանը կամ կուրիան էր: Թագավորի խորհուրդը հիմնադրելուց քսան տարի անց դրա կազմը ենթարկվում է էական փոփոխության:

Թագավորի խորհրդի հետ համեմատած՝ թագավորի ժողովն առավել ընդարձակ կազմ ուներ: Որպես կանոն, թագավորի ժողովը հրավիրվում էր տարին երեք անգամ: Ընդ որում, բոլոր խոշոր ավատատերերը կոչվում էին բարոններ: Այդ ժողովի կազմում ընդգրկվում էին նաև Անգլիայի եպիսկոպոսները և վանահայրերը, որոնք, ավատական ավանդույթով, համարվում էին օրինական բարոններ: Թագավորի ժողովը բաղկացած էր հինգ հարյուր աշխարհիկ և հոգևոր խոշոր բարոններից՝ թագավորի գերիշխանությամբ (*of the King's supreme power*): Իբրև Անգլիայի ավատատիրական թագավորության կենտրոնական հաստատություն՝ թագավորի ժողովը հավանություն էր տալիս և հաստատում թագավորի հրամանագրերը, դեկրետները, քաղաքացիական հայցերով (գործերով) դատարանի որոշումները, վճիռները, ինչպես նաև եկեղեցական խորհրդի որոշումները, բնապահպանության դեկրետները սահմանում էին հատկապես ֆինանսական միավորների արտակարգ չափերը: Սակայն Վիլիելմ I-ի կառավարման ժամանակաշրջանում վիտաններն իրենց պաշտոնական պարտականությունները պատշաճորեն չէին կատարում (մինչդեռ նրանք պարտաճանաչ էին անգլոսաքսոնական դարաշրջանում՝ VI-XI

⁴ Smith G., նշվ. աշխ., էջ 39: Hume D., նշվ. աշխ., էջ 178-219:

⁵ Smith G., նշվ. աշխ., էջ 40:

ող.), չնայած մըշտապես գտնվում էին թագավորի վերահրսկողության ներքո: Ահա թե ինչու տոհմական ծագում և տիտղոսավոր բարոն – պերերի (*of the baron peers*) ճնշման ներքո Անգլիայում ձևավորվում է ավատական մեծ դատարան կամ մեծ խորհուրդ, որը խորհրդակցական, օրենսդրական և դատական հաստատություն էր: Հենց այդպիսի պետաիրավական հաստատության հիմնադրումը թագավորական իշխանությանը տալիս էր ավելի կենտրոնացված քաղաքական բնույթ:

Ավատական մեծ դատարանի՝ մեծ խորհրդի կողքին արդեն գոյություն ուներ մշտապես գործող փոքր խորհուրդը, որի նիստերին հաճախ ներկայանում էր թագավորը: Համեմատական իրավագիտության սկզբունքի տեսակետից՝ փոքր խորհրդի իշխանությունն ակնհայտորեն նույնն էր, ինչ մեծ խորհրդինը, և այն կոչվում էր հնագույն կամ բարձրագույն համաժողով: Իսկ անգլոսաքսոնական թագավորություններում գերագույն կամ բարձրագույն ժողովը կոչվում էր իմաստուն կամ իմաստունների ժողով: Այն անգլոսաքսերի ավագների խորհուրդն էր. այլ կերպ ասած, այդ խորհուրդը թագավորության ողջամիտ, շրջահայաց և մեծ խորհուրդն էր: Իսկ անգլոսաքսոնական Անգլիայում թագավորը մարմնավորում էր գերագույն գործադիր իշխանություն⁶: Իրականում ավատական մեծ խորհրդի և փոքր խորհրդի միջև իրավասության տարբերություն գոյություն չի ունեցել: Վիլիելմ I-ի թագավորության օրոք ավատական մեծ ժողովն արդեն վերանվանվում է մեծ խորհուրդ, իսկ փոքր խորհուրդը կամ թագավորի գործարար խավը (կամ խումբը) արդեն վերանվանվում է թագավորի խորհուրդ, որն իրականացնում է գործադիր իշխանություն: Թագավորի ժողովը կամ փոքր խորհուրդը բաղկացած էր խոշոր հողատերերից, այսինքն՝ անշարժ գույք տնօրինող սեփականատերերից (*tenants in chief*), որոնք մշտապես ծառայում էին թագավորի ընտանիքին: Անգլոսաքսոնական թագավորները հաճախ իրավական խորհուրդներ էին ստանում տնային ծառայողներից, այն դեպքում, երբ վիտանը՝ իմաստունը, չէր կարողանում մասնակցել թագավորության գերագույն կամ բարձրագույն համաժողովի պետաիրավական գործունեությանը, կամ էլ չէին կամենում կիրառել նախկինում սահմանված ու հաստատված կարգը: Վիլիելմ I-ը կառավարության կազմում՝ նրա գործադիր կառույցում, տնային ծառայողներին նշանակում էր վարչարարական աշխատանքի՝ կատարողական իշխանություն իրականացնելու համար: Հենց դրա համար էլ թագավորական իշխանության կենտրոնացումը գլխավորապես նպատակ էր հետապնդում ուժեղացնելու, ճկուն դարձնելու կառավարման համակարգը, հիմնադրելու նոր վարչակարգ՝ տվյալ պատմաքաղաքական ժամանակաշրջանում իրականացնելու որոշակի քաղաքականություն: Վիլիելմ I-ի՝ իշխանության կենտրոնացման քաղաքականության էությունն այն էր, որ թագավորի տնային տնտեսության ծառայողները միաժամանակ թագավորական իշխանության ծառայողներ էին, որոնք հարուստ ազնվականների տներում սպասավորների պետեր էին, իսկ վերջիններս էլ այս կամ այն կերպ առնչվում էին հարուստ ազնվականների պաշտոնավարության պարտականությունների կատարմանը: Թագավորի տնտեսության կառավարիչը աշխատում էր թագավորի գործադիր

⁶ Նույն տեղում, էջ 23:

իշխանության մեջ: «Նըրանք, այսպես ասած, ժամանակակից քաղաքացիական ծառայողների նախակարապետներն էին»⁷: Էդուարդ Խոստովանողը (Էդուարդ Խոստովանահայրը – 1042-1066 թթ.) շատ լավ էր հասկանում նորմանդական թագավորների վարչապետի կամ քարտուղարի ծառայության՝ այդ բարձրագույն պաշտոնի անհրաժեշտությունը: Իսկ վարչապետը կամ քարտուղարը նախապատրաստում և հրատարակում էին թագավորական փաստաթղթերը (*the issue royal documents*): Թագավորի վարչապետը (կանցլերը) վերանվանում է որպես լորդ վեհապետ կամ տիրակալի իրավունք կրող հողատեր, այլ կերպ ասած, այդ լորդ կանցլերը նորմանդական գահատոհմի գերագույն դատավոր և փոխարքա էր Անգլիայում, Վիլիելմ I-ի թագավորության կառավարման ամբողջ ժամանակաշրջանում: Ինչպես նշում է անգլիագետ Գ. Սմիթը, այդ բարձրագույն պատկանում էր թագին⁸: Էդուարդ Խոստովանահայրը առաջադրված և հաստատված վարչապետի կամ վեհապետի բարձրագույն պաշտոնը լորդ վարչապետ վերանվանելուց հետո, Վիլիելմ I-ի թագավորության վարչակազմում սահմանում և հիմնադրում է նոր՝ այսպես կոչված, նորմանդական գահատոհմի թագավորի փոխարքայի և գերագույն դատավորի (*of the highest justiciar*) բարձրագույն պաշտոնը:

Վիլիելմ I-ի կառավարման օրոք Անգլիայի ավատատիրական թագավորությունում փոխարքայի և գերագույն դատավորի բարձրագույն պաշտոնում չէր կարող նշանակվել թագավորական տան ընտանիքի անդամը, սակայն թագավորին հավատարիմ, նվիրված ու վստահված անձը թագավորի վարչակազմի գլուխն ու իրավագետ օգնականն էր:

XII դ. առաջին կեսին փոխարքան և գերագույն դատավորը միաժամանակ համարվում էր թագավորության դատական համակարգի գլուխ և թագավորի ժամանակավոր բացակայության դեպքում սովորաբար փոխարինում էր նրան: Հետագայում թագավորության գերագույն դատավորի և փոխարքայի՝ լորդ վարչապետի դերն աստիճանաբար նվազում է, իսկ այդ պաշտոնը շարունակում է գոյություն ունենալ մինչև XIII դ.: Բացի այդ, վարչապետի և գլխավոր դատավորի գործառույթները կատարող պաշտոնյաների առկայությունն ավելի ու ավելի արդյունավետ և գործնական էր դարձնում թագավորի խորհրդի պետաիրավական հիմնախընդիրների լուծման գործընթացը, ինչպես նաև թագավորության պետական կառույցի լծակների ռիթմիկ, սահուն և շարունակական գործունեությունը: Դրա շնորհիվ օրեցօր մեծանում էր թագավորի խորհրդի քաղաքական-իրավական հեղինակությունն ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Թագավորության առջև ծառայած պետաիրավական բարդ խնդիրները կենսագործելու, թագավորական տան անդամներին աջակցելու և օգնելու նպատակով՝ արդեն անհրաժեշտաբար պահանջվում էր մեծ թվով պաշտոնյաների կամ պետական ծառայողների ներգրավումը թագավորի խորհուրդ: Սակայն թագավորի խորհուրդն աստիճանաբար կորցնում էր իր վաղեմի՝ թագավորական դատարանի դերը կատարելու իրավունքները և պարտականությունները, որը հետագայում

⁷ Նույն տեղում, էջ 40:

⁸ Նույն տեղում:

կարևոր նախապայման է դառնում ժամանակակից Անգլիայի պետական կառավարման ճյուղերի ստեղծման ու հիմնադրման համար:

Վիլիելմ I-ը որոշ փոփոխություններ է կատարում տեղական կառավարման հաստատությունների համակարգում: Նրա պահանջով կոմսությունների և հարյուրակների դատարանների իրավագործություններն անցնում են թագավորական իշխանությանը, իսկ նշանակված շերիֆները՝ կոմսերը, պատասխանատվություն էին կրում թագավորի առջև: Ըստ որում, այդ շերիֆները մեկ դար շարունակ Անգլիայի վարչատարածքային ամբողջության ամենաուժեղ և հեղինակավոր պաշտոնյաներն էին: Նրանց գործառնությունները կարևոր նշանակություն էին ձեռք բերել տեղական վարչակազմում: Դրան հակառակ՝ խոշոր կոմսությունները (*the great earldoms*) գրեթե վերացել էին: Չնայած կոմսերը տեղական վարչարարության, դատական և զինվորական ոլորտներում որոշակի և էական դեր էին խաղում, այնուամենայնիվ, աստիճանաբար կորցնում էին իրենց նախկին իշխանությունը, իսկ խոշոր կոմսությունների մեծ մասը անհետանում էր, ինչպես Մերսիան, Նորտուսթրիան և Արևելյան Անգլիան: Սակայն Անգլիայի սահմանապահ և սահմանամերձ գոտիներում շարունակում էին գոյատևել Չեսթերի, Շրյուսբրիի և Դյուրհեմի ուժեղ կոմսությունները⁹, որոնք պատնեշ ու բերդ էին շոտլանդացիների և ուելսցիների դեմ: Անգլիայի մյուս կոմսությունները շարունակում էին մնալ որպես որոշակի հեղինակություն վայելող տեղական վարչարարական և դատական հաստատություններ: Սակայն Վիլիելմ I-ի կենտրոնացման քաղաքականությունը և դրա կենսագործման պետաիրավական միջոցառումներն իրականացվում էին ոչ թե կամայականությամբ և ինքնիրավչությամբ, այլ օրենքով և հանուն օրենքի: Էդ. Ֆրիմենն այս առնչությամբ հիշատակում է. «Նա կառավարում էր ոչ թե սեփական կամքով, ոչ թե իր իսկ մշակած օրենքներով, այլ կառավարում էր իր նախորդների և հայրենակից Էդուարդ թագավորի օրենքների համաձայն: Նրա մշակած կարևոր և հապճեպ բարեփոխումը չի եղել ինչ-որ ձևական օրենսդրության փոփոխություն, այլ եղել է լրակյաց հեղափոխություն, աստիճանական ու զգուշավոր եզրափակիչ անցում»¹⁰: Հենց այդ օրենքների կիրառման ու կենսագործման շնորհիվ Անգլիայի թագավորական իշխանությունն աստիճանաբար անցնում էր դեպի կենտրոնացված միապետության կառավարման ձևին, և արդեն հաստատվում էին թագավորական իշխանության կենտրոնացման քաղաքական-իրավական հիմունքները: Վիլիելմ I-ը էական փոփոխություններ է կատարում թագավորական իշխանության քաղաքական ռեժիմում, գործադրում օրենքները և այդ օրենքների ուժով էլ խրատացնում քրեաիրավական պատժողական քաղաքականությունը:

Անգլիայի թագավորության կառավարման օրոք Վիլիելմ I-ը հրատարակում է հրովարտակ Լոնդոն քաղաքի վերաբերյալ (*Charter of William I to the City of London*) և ստատուտներ (*Statutes of William the Conqueror*), որոնցով

⁹ Նույն տեղում, էջ 41:

¹⁰ **Freeman Ed.**, *The Growth of the English Constitution from the Earliest Times. Leipzig, 1872, p. 103.*

վավերացրել է հնագույն օրենքները (*Confirmations of the Earlier Laws*), եկեղեցական և աշխարհիկ դատարանները տարանջատելու մասին հրամանագիր (*Ordinance of William I Separating the Spiritual and Temporal Courts*), «Ահեղ դատաստանի գիրքը» (*Domesday Book*), որտեղ հիշատակել է, որ նախքան Անգլիայի նվաճումն իրենից առաջ գոյություն է ունեցել «Ընդհանուր իրավունքը» (*Common Law*): Նա հաստատել է նաև Չեստերի սովորույթները, (*Customs of Chester*), Լինկոլնի սովորույթները (*Customs of Lincoln*), Օքսֆորդի և Օքսֆորդշայրի սովորույթները, Բերկշայրի սովորույթները¹¹, որոնք, ըստ էության, իրավական հիմունքներ են եղել Անգլիայում ստեղծելու կենտրոնական ու տեղական կառավարման հաստատությունների համակարգ, գործադիր ապարատ իր խստագույնս թագավորական կարգապահությամբ: Թագավորության բոլոր պաշտոնյաների առաջնահերթ խնդիրն էր օրենքների միասնական ու անշեղ կատարումը: Ելնելով այդ օրենքների պարտադիր կատարման պահանջներից՝ Վիլիելմ I-ը միատեսակ պայմաններ էր ստեղծում նորմանդական և անգլիական ծագում ունեցող բոլոր խոշոր հողատերերի համար¹²:

Այսպիսով, Վիլիելմ I-ը Անգլիայում վերացնում է ապակենտրոնացված թագավորական իշխանության համակարգը և հիմնադրում կենտրոնաձիգ պետական նոր հաստատությունների համակարգ, սահմանում կենտրոնական և տեղական հաստատությունների փոխհարաբերությունների բնույթը, դրանց իրավասությունները, վերակազմավորում թագավորության պետական կառույցները: Դրանց շնորհիվ XI դ. ստեղծում են միասնական կենտրոնացված թագավորական իշխանություն և նոր քաղաքական ռեժիմ, որը, ըստ էության, առաջադիմական երևույթ էր Անգլիայի թագավորական իշխանության ամբողջ պատմության ընթացքում:

ГЕНЕЗИС ЦЕНТРАЛИЗОВАННОЙ ВЛАСТИ И ПРЕОБРАЗОВАНИЕ ГОСУДАРСТВЕННОГО АППАРАТА АНГЛИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XI ВЕКА

ЕСАЯН Э. С.

Резюме

Вильгельм I ликвидировал систему децентрализованной королевской власти, создав новую систему централизованных государственных учреждений и определив характер взаимоотношений центральных и местных учреждений, их юрисдикцию. Таким образом, он реформировал государственный аппарат королевства, благодаря чему была создана единая централизованная королевская власть и был установлен новый политический режим, что, по сути, было прогрессивным явлением во всей истории английской королевской власти в XI в.

¹¹ St' u **Stubbs W.**, *Select Charters and other Illustrations of English Constitutional History from the Earliest Times to the King of Edward the First*, Oxford, 1870, p. 79-88.

¹² St' u **Freeman Ed.**, *նշվ. աշխ.*, էջ 104: